ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**19 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 790 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Առողջ կյանքի ուղի»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի սեպտեմբերի 14-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված և ներմուծված բժշկական սարքավորման ( 2 տեղ, 86 կգ ընդհանուր քաշով, 14,100 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 5,818,420 իրանական ռիալին համարժեք դրամ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա և 2017 թվականի ապրիլի 27-ի N Մ-350-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 791 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված կենցաղային տեխնիկան (374 տեղ, 4000.3 կգ ընդհանուր քաշով, 16,650 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

Ձեռք բերված կենցաղային տեխնիկան անհատույց հանձնվելու է Երևանի քաղաքապետարանին:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ Երևանի քաղաքապետարանի կողմից նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել բեռի բաշխման ցանկը:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարանին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 792 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2017 թվականի սեպտեմբերի 25-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ձեռքբերված արևային ջրատաքացուցիչները (60 հատ) (1,640 կգ քաշով, 6,100 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 483,600 դրամ, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա, 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա և 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1094-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում: Արևային ջրատաքացուցիչները օգտագործվելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդավան համայնքի երաժշտական դպրոցում և Նոյեմբերկյան քաղաքի մանկապարտեզում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

12/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 793 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ «Ն. ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 01.1/14-2/16346-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 12-ի N 02/14/16028-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N ՆՁ/22.2/11154-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 7-ի N 06/3-8/34613-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 640,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2017 թվականի օգոստոսի 21-ին կնքված N ՀՀ-Կ-07/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի համար նախատեսված պահարանների պատրաստում և տեղափոխում՝ 640,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» սեպտեմբերի 2017թ.

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի մասնակի կահավորում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Անհրաժեշտ պայմաններ ստեղծել «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ում Միացյալ Նահանգներից ժամանող բարձրակարգ վիրաբույժների կողմից անվճար վիրահատություններ կատարելու համար |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաք, առողջապահության բնագավառ |

| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 640.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ օգոստոսի 21-ից մինչև 2017թ. նոյեմբերի 21-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ օգոստոսի 21-ից մինչև 2017թ. նոյեմբերի 21-ը պատրաստել, գնել, տեղափոխել և անհատույց տեղադրել 6 հատ դեղորայքի պահարան 640.000,00 դրամ արժեքով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից 6 հատ դեղորայքի պահարանների պատրաստում, գնում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 640.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 794 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ԱԼԱՇԿԵՐՏ, ԻՇԽԱՆԱՁՈՐ ԵՎ ՀԱԿ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 01.1/14-2/16344-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի -12ի N 02/14/16029-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 7-ի N 06/3-8/34612-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 28,011,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Ալաշկերտ, Իշխանաձոր և Հակ գյուղերի դպրոցների ամբողջական կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված N ԼՂ-Կ-10/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Քաշաթաղի շրջանի Ալաշկերտ գյուղի դպրոցի համար կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 8,490,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված N ԼՂ-Կ-09/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղի դպրոցի համար կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 12,707,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված N ԼՂ-Կ-08/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Քաշաթաղի շրջանի Հակ գյուղի դպրոցի համար կահույքի պատրաստում և տեղափոխում՝ 6,813,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» սեպտեմբերի 2017թ.

# « Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Ալաշկերտ, Իշխանաձոր և Հակ գյուղերի դպրոցների ամբողջական կահավորում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ամբողջովին կահավորել Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Ալաշկերտ, Իշխանաձոր և Հակ գյուղերի դպրոցները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից ստացված միջոցներից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արցախի Հանրապետություն, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 28.011.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ԱՀ Քաշաթաղի շրջանի Ալաշկերտ, Իշխանաձոր և Հակ գյուղերի դպրոցները: |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ օգոստոսի 22-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 22-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ օգոստոսի 22-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 22-ը կահավորել Քաշաթաղի շրջանի վերոնշված գյուղերի դպրոցները 28.011.000,00 դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերի հավելվածների ցանկերի համաձայն՝ գույքի պատրաստում, գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում.<br><br>Ալաշկերտ՝ 8.490.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի<br>Իշխանաձոր՝ 12.707.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի<br>Հակ՝ 6.813.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կրթության և գիտության նախարարության հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ֆինանսական միջանկյալ եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 795 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 01.1/14-2/16426-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 12-ի N 02/14/16030-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 04/07-1/12303-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 11-ի N 06/3-8/35047-17 և եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 38,290,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված N ՀՀ/Բ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 37,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԳԼՈՄՄԱ» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01515334) 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված N ՀՀ-06/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության իրականացում՝ 220,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված N ՀՀՏՀ-06/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 370,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«06» սեպտեմբերի 2017թ.

**« Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի տարածքի բարեկարգում»**

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտների և ուսուցչական անձնակազմի աշխատանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 38.290.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Արմավիրի մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտները և ուսուցիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ օգոստոսի 28-ից մինչեւ 2017թ.դեկտեմբերի 28-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ օգոստոսի 28-ից մինչեւ 2017թ դեկտեմբերի 28-ը կատարել տարածքի բարեկարգման աշխատանքները՝ 38.290.000,00 դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «N1 Շինվարչություն» ՍՊԸ-ի կողմից բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 37.700.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Ռուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից բարեկարգման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 370.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ԳԼՈՄՄԱ» ԱԿ-ի կողմից բարեկարգման հեղինակային հսկողության իրականացում՝ 220.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արմավիրի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

12/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 796 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ ԵՎ ԽԱՉԱՐՁԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՋԵՐՄՈՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 01.1/14-2/16446-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N 02/14/16206-17, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N ՌՄ/ԳՂ-2/8121-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 06/3-8/35050-17 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 12-ի N 01/21.1/3791-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 18,053,180 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ և Խաչարձան համայնքներում անհատական ջերմոցների կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ատիկա Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237598) 2017 թվականի օգոստոսի 8-ին կնքված N ՀՀ/ՏՋ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է յոթ անհատական ջերմոցների կառուցում՝ 17,883,180 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09811047) 2017 թվականի օգոստոսի 8-ին կնքված N ՀՀՏՀ-07/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության իրականացում՝ 170,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«06» սեպտեմբերի 2017թ.

# « Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ և Խաչարձան համայնքներում անհատական ջերմոցների կառուցում »

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | -շահագրգռել սահմանամերձ և փախստականներով բնակեցված գյուղերի բնակիչներին զբաղվել բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ, -նպաստել գյուղացիների սննդամթերքի խնդիրների լուծմանը, -գոյատևելու պայմաններ ստեղծել սահմանամերձ գյուղերից չհեռանալու համար՝ 100 քառակուսի մետր մակերեսով ջերմոցներ կառուցել և անհատույց հանձնել (նվիրատվության պայմանագրի համաձայն տասս տարի չօտարելու պայմանով) վիճակահանության սկզբունքով ընտրված ընտանիքներին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հետևյալ գյուղերում. Այգեհովիտ 4 հատ, Խաչարձան 3 հատ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ և Խաչարձան համայնքները, գյուղատնտեսության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ընդհանուր բյուջեն 18.053.180,00 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ և Խաչարձան համայնքների բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ օգոստոսի 08 -ից մինչեւ 2017թ.դեկտեմբերի 08-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ. օգոստոսի 08 -ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 08-ը թվով յոթ ջերմոց կառուցել Տավուշի մարզի Այգեհովիտ և Խաչարձան համայնքներում՝ 17.883.180,00 դրամ արժողությամբ: Տեխնիկական հսկողություն իրականացնել՝ 170.000,00 դրամ արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ատիկա Շին» ՍՊԸ-ի կողմից Այգեհովիտ (4) և Խաչարձան (3) համայնքներում ջերմոցների կառուցում՝ 17.883.180,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական հսկողության իրականացում՝ 170.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 797 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 01.1/14-2/16711-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 13-ի N 06/3-8/35953-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հեռուստատեխնիկայի (9 տեղ, 378 lbs ընդհանուր քաշով, 60,104.32 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,287 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Սարքերն անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության հանրային հեռուստատեսությանը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 798 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 01.1/14-2/164213-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 12-ի N ՆՁ/22.2/11362 -17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 11-ի N 06/3-8/35048-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ցյուրիխի Էլեոնորեն հիմնադրամ - մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված տասը հատ անեսթեզիայի դիմակները (1 տեղ, 1.200 կգ ընդհանուր քաշով, 200 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 48 շվեյցարական ֆրանկ, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 799 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16764-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N ՆՁ/22.2/11625-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/34518-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից գնված լաբորատոր ախտորոշիչ սարքի մասը (1 տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 4,946 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 500 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 800 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1198-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16767-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԳ/ԱՍՄ-2-1/9537-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 19-ի N ՆՁ/22.1/11616-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36364-17 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 19-ի N 01/6378-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Իտալիայի «ՊՐՈՁԱ» բարեգործական կազմակերպության կողմից «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (1,646 արկղ, 10,480 կգ ընդհանուր քաշով, 26,908.43 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 4,600 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Հյուսիսային» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 3-ի «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1198-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

1CONTAINER FROM ITALY / 1ԲԵՌՆԱՐԿՂ ԻՏԱԼԻԱՅԻՑ N. TRLU722308/7

| | Pes Արկղ | Weight Net (kg) Մաքուր քաշը (կգ) | Gross Weight (kg) Քաշը – (կգ) | Amount Արժեք - ԵՎՐՈ |
|---|---|---|---|---|
| *PANNOLONI ADULTI / ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԽԱՆՁԱՐՈՒՐ* | 510 | 1.935,00 | 2.109,00 | 1.000,00 |
| *MEDICINALI / ԴԵՂՈՐԱՅՔ* | 59 | 596,00 | 671,75 | 17.412,75 |
| *MATERIALE SANITARIO / ԲՈՒԺՊԱՐԱԳԱՆԵՐ* | 125 | 653,00 | 712.92 | 3.250,68 |
| *VESTIARIO DISMESSO / ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆ* | 785 | 5.067,33 | 5.587,33 | 2.500,00 |
| SCAFFALI IN METALLO / ՄԵՏԱՂՅԱ ԴԱՐԱԿՆԵՐ | 6 | 100,00 | 100,00 | 405,00 |
| CARROZZINE / ԱՆՎԱՍԱՅԼԱԿՆԵՐ | 3 | 35,00 | 35,00 | 100,00 |
| STAMPELLE/ ԱՆԹԱՅՈՒՂ (ՀԵՆԱԿՆԵՐ) | 10 | 7,00 | 7,00 | 20,00 |
| DEAMBULATORI PER DISABILI/հենակներ հաշմանդամների քայլելու համար | 7 | 21,00 | 21,00 | 150,00 |
| PRODOTTI PER PULIZIA / ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ | | | | |
| a) detersivo per biancheria/ սպիտակեղենի համար | 15 | 150,00 | 156,00 | 400,00 |
| *b) carta igienica / հիգիենիկ թուղթ* | 80 | 410,00 | 420,00 | 1.000,00 |
| *c) lenzuolini monouso / միանգամյա օգտագործման բրդյա սավաններ* | 10 | 95,00 | 100,00 | 250,00 |
| *d) sacchetti neri / Աղբի սև պարկեր* | 18 | 258,00 | 270,00 | 220,00 |
| *CANCELLERIA / ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ* | | | | |
| *a) pennarelli / մարկերներ* | 12 | 200,00 | 205,00 | 150,00 |
| *b) aggende / նոթատետր* | 6 | 80,00 | 85,00 | 50,00 |
| TOTALE / ԸՆԴԱՄԵՆԸ | 1.646 | 9.607,33 | 10.480,00 | 26.908,43 |

*Կամիլիանների Միաբանության «Ս. Կամիլլո» Բարեգործական Հիմնադրամի Տնօրեն Հ. Մարիո Կուկկարոլլո*

*Աշոցք 13.09.2017թ.*

**Կամիլյանների Միաբանության**
***«Ս. Կամիլլո»* Բարեգործական Հիմնադրամ**
**2801 - <u>ԱՇՈՑՔ</u> (Շիրակ-Հայաստան)**

**Fondazione Umanitaria *"S. Camillo"***
**dell'Ordine dei Camilliani**
**2801 - <u>ASHOTSK</u> (Shirak-Armenia)**

12/1 11

ԿԱՄԻԼԼԻԱՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ «Ս.ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

## *ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ*

| *Ապրանքի անվանումը* | *Ընդհանուր քաշը (կգ)* | *Արժեքը (եվրո)* |
|---|---|---|
| *օգտագործվելու է «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի համար* | | |
| *PANNOLONI ADULTI / ՄԵԾԱՀԱՍԿՆԵՐԻ ԽԱՆՁԱՐՈՒՐ* | *809,00* | *350,00* |
| *MEDICINALI / ԴԵՂՈՐԱՅՔ* | *671,75* | *17.412,75* |
| *MATERIALE SANITARIO / ԲՈՒԺՊԱՐԱԳԱՆԵՐ* | *712,92* | *3.250,68* |
| *SCAFFALI IN METALLO / ՄԵՏԱՂՅԱ ԴԱՐԱԿՆԵՐ* | *100,00* | *405,00* |
| *STAMPELLE / Անթացուպ /հենակներ/* | *7,00* | *20,00* |
| *DEAMBULATORI PER DISABILI/հենակներ հաշմանդ. քայլելու համար* | *21,00* | *150,00* |
| *PRODOTTI PER PULIZIA / ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ* | | |
| *a) detersivo per biancheria/ սպիտակեղենի համար* | *156,00* | *400,00* |
| *b) carta igienica / հիգիենիկ թուղթ* | *420,00* | *1.000,00* |
| *c) lenzuoli monouso/ միանգամյա օգտագործ.թղթյա սավաններ* | *100,00* | *250,00* |
| *d) sacchetti neri / սև պարկեր աղբի համար* | *270,00* | *220,00* |
| ***Կամիլյանների Միաբանության «Ս. Կամիլլո» Բարեգործական Հիմնադրամի Կանոնադրության 2-րդ պարագրաֆի 2.1-ի կետի համաձայն բաշխվելու է գրանցված մոտ 600/700 (վեց հարյուր/յոթ հարյուր) անապահով ընտանիքներին*** | | |
| *VESTIARIO DISMESSO / ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱԳՈՒՍՏԵՂԵՆ* | *5.587,33* | *2.500,00* |
| *PANNOLONI ADULTI / ՄԵԾԱՀԱՍԿՆԵՐԻ ԽԱՆՁԱՐՈՒՐ* | *1.300,00* | *650,00* |
| *CARROZZINE / ԱՆՎԱՍԱՅԼԱԿ* | *35,00* | *100,00* |
| *CANCELLERIA / ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐ* | | |
| *a) pennarelli / մարկերներ* | *205,00* | *150,00* |
| *b) aggende / նոթատետր* | *85,00* | *50,00* |
| *Ընդամենը* | *10.480,00* | *26.908,43* |

մեկ բեռնարկղի՝ N. TRLU7223087 տրանսպորտային ծախսը կազմել է 4.600,00 (եվրո):

Կամիլյանների Միաբանության «Ս. Կամիլլո»
Բարեգործական Հիմնադրամի
Տնօրեն՝ Հ. [illegible]

13.09.2017թ.

Իրավաբանական վայրը «Տիրամայր Նարեկի» Հիվանդանոցում
2801 ԱՇՈՑՔ (Շիրակ-Հայաստան)
Հեռ. և Ֆաքս. 00374.10.280 290 - 00374.245.21 722
E-mail: camillians_ashotsk@web.am - Հարկային կոդ. 05806438
redemptorismaterashotsk@yahoo.it

Sede legale: c/o Ospedale "Redemptoris Mater"
2801 - ASHOTSK (Shirak)
Tel. e Fax: 00374.10.280 290 - 00374.245.21 722
E-mail: camillians_ashotsk@web.am - Code. fisc. 05806438
redemptorismaterashotsk@yahoo.it

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 801 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16763-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 06/3-8/35956-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա որոշմամբ (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ուրբանյունիթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00078998) 2017 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N ARCHI-CONSTR-2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ՍՄԱՐԹ կենտրոնի կոնստրուկտորական մասի փոփոխությունների, նրանց հեղինակային հսկողության և անվտանգության նախագծերի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 1,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 802 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-064-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 01.1/14-2/17072-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N 06/3-8/36890 -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-064-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սենդա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00088004) 2017 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված N 030/SCI-ARM/GEN/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխաների աջակցության կենտրոնի համար կահույքի պատրաստում և անվճար առաքում՝ 2,598,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՍԱՎ ՎԱՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 000089023) 2017 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված N 031/SCI-ARM/GEN/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգումից հետո երեխաների աջակցության կենտրոնի մաքրում՝ 429,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ	Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 803 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1239-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 01.1/14-2/17121-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 05/15.1/6173-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/37218-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարելավում» ծրագրի մասին» N Մ-1239-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շահարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04210867) 2017 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Արագածոտնի մարզի Կաքավաձոր համայնքում խմելու ջրագծի վարականգնման աշխատանքների համար անհրաժեշտ խողովակների ձեռքբերում՝ 2,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 804 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1256-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N 01.1/14-2/16909-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36365-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1339-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» N Մ-1256-Ա որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 479,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի ու «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի փետրվարի 13-ին կնքված N 520099949 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 798,750 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 805 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1257-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 01.1/14-2/16972-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36314-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի N Մ-1340-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» N Մ-1257-Ա որոշման 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի հունիսի 1-ին կնքված N 05-11-511 և N 07-64-34-4 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 270,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի ու «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի օգոստոսի 4-ին կնքված N 06-1-3107-64-34-4 և 2017 թվականի փետրվարի 13-ին կնքված N 05-11-511 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 450,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված N 06-1-311 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 78,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի ու «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված N 06-1-31 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 131,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 806 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N 01.1/80-2/16910-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36315-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 5/08.2/51879-17, գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 01.1/14-2/17124-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/37216-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 2017 թվականի հուլիսի 4-ին կնքված դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.07.2017 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագրի մասին» N Մ-670-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մաքսօիլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02662703) 2017 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված՝ N ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/03-Ա պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված բենզինի ձեռքբերում՝ 2,028,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-823- Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 01.1/14-2/17143-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N ՆՁ/22.2/11937-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 06/3-8/37571-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ռետինալ խցիկներ լրակազմով՝ 5 տեղ, 85 կգ ընդհանուր քաշով, 29,625 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-824- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-044-Ա ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 01.1/14-2/17358-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 06/3-8/38007-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վահագն Մելիք Մարտիրոսյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2017 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ N Գ-18/ 2017 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 978,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-825- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱ-ԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17288-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38722-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Գլենդել քաղաքի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից, որպես նվիրատվություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (համակարգչային տեխնիկա, գործիքներ և լաբորատոր սարքեր ու նրանց բաղադրամասեր՝ 5 տեղ, 24.29 կգ ընդհանուր քաշով, 6,855.35 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 645.58 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 826 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԲԱԶՐԻՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17170-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 02/14/16820-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/37199-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 6,268,800 դրամ արժողությամբ «Գարեգին Ա կրթական կենտրոնի աստիճանների բազրիքների պատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետալ-Դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2017 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N 1608/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղյա բազրիքների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 6,268,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
[illegible] Բաբայան
19 սեպտեմբեր, 2017թ.

12/5

Գարեգին Ա կրթական կենտրոնի աստիճանների բազրիքների պատրաստում

### Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնի պարուրաձև աստիճանների մետաղական բազրիքների պատրաստումը և տեղադրումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Եկեղեցաշինական, կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 6.268.800 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 սեպտեմբեր, 2017 – 01 , դեկտեմբեր 2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնի պարուրաձև աստիճանների մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում, որի գումարը կազմում է 6.268.800 ՀՀ դրամ ՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Մետալ- Դիզայն» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Հաղթանակի 1/11, (ՀվՀՀ 01239878 ), պայմանագիր կնքված 01.09.2017թ. : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 01 սեպտեմբեր, 2017 – 01 դեկտեմբեր, 2017 թ. : |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթական կենտրոնի պարուրաձև աստիճանների մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում, որի գումարը կազմում է 6.268.800 ՀՀ դրամ ՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական և ճարտարապետաշինարարական բաժինների, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 827 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 01.1/14-2/16706-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36231-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմավառության սրահի կառուցման նպատակով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտի (58 տեղ, 157,200 կգ ընդհանուր քաշով, 54,185.62 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 828 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 01.1/14-2/16707-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36230-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, ծիսական մոմի արտադրության նպատակով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված պարաֆինի (22,500 կգ ընդհանուր քաշով, 32,625 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 829 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16720-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N ՆՁ/22.2/11540-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36225-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Healthtronics Service Center LLC-ի կողմից, «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված քարափշրման սարքավորման սեղանի և պարագաների (746 կգ ընդհանուր քաշով, 50,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,401.4 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 830 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16740-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36224-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի ժողովրդական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմավառության սրահի կառուցման նպատակով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտի (111 տեղ, 235,610 կգ ընդհանուր քաշով, 91,710.89 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 831 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16793-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36232-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշմամբ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա, հոկտեմբերի 25-ի N Մ-963-Ա, 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա, 2016 թվականի մարտի 18 N Մ-186-Ա և 2017 թվականի հուլիսի 14 N Մ-595-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուգլիֆտ» ԴԱՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009839) 2017 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված N 4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իրականացնել մարդատար վերելակների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 832 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 01.1/14-2/17103-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/37217-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի N Մ-593-Ա և օգոստոսի 30-ի N Մ-709-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մետատեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00099721) 2017 թվականի սեպտեմբերի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գիտության լաբորատորիայի կահույքի պատրաստում և մատակարարում՝ 6,370,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հ[illegible] Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտնե[illegible]:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 833 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 01.1/14-2/17144-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 06/3-8/37213-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2017 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված N AT-AU-077-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ու Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 834 - Ա**
**քաղ. Երևան**

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 4)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 01.1/14-2/17345-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38726-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի ժողովրդական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մոմավառության սրահի կառուցման նպատակով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրանիտի (33 տեղ, 42,700 կգ ընդհանուր քաշով, 26,267.37 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7,900 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 835 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 01.1/14-2/17584-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/38373-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի N Մ-593-Ա և օգոստոսի 30-ի N Մ-709-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մետատեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00099721) 2017 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում են կահույքի պատրաստում և մատակարարում՝ 1,360,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Եվրոստան-Ույուտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01537756) 2017 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում են կահույքի պատրաստում և մատակարարում՝ 510,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սֆերա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02573316) 2017 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում են կահույքի պատրաստում և մատակարարում՝ 7,142,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 836 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17283-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 06/3-8/37974-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի N Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՎՄԳ-ԷԼՖ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00073693) 2017 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պրոֆնաստիլի և մետաղյա տակդիրի ձեռքբերում՝ 1,792,717 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 837 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N Մ-291-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(«Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի -ի N 01.1/14-2/17578-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38775-17 եզրակացությունները և հաշվի առնելով «Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմադրամի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 230917-1 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 7-ի «Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրիում ծերանոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-291-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում և որոշման 1-ին կետում «Գյումրիում ծերանոցի կառուցում և կահավորում» բառերը փոխարինել «Շիրակի մարզում ծերանոցի կառուցում և կահավորում» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված.որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ախուրյանի Կոռպշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2017 թվականի հուլիսի 27-ին կնքված N ANH 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծերանոցի կառուցման հողային, շենքի կմախքի կառուցման, շենքի պատյանի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 62,035,997 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ախուրյանի Կոռպշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2017 թվականի սեպտեմբերի 18-ին կնքված N ANH 02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծերանոցի ներքին հարդարման, բարեկարգման, ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրական, ջեռուցման և օդափոխության շինարարական աշխատանքների իրականացում՝ 31,894,384 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱԼԲԵՐՏ ՍԵՎԻՆՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՏԱՅՅԱՆ ՓԻՐԱՅՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«03» [illegible] 2017թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Շիրակի մարզում ծերանոցի կառուցում և կահավորում»

| | | |
|---|---|---|
| 1 | **Ծրագրի նպատակը** | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում ծերանոցի (ծերերի խնամքի տան) կառուցում 18 ծերերի համար, որտեղ կմատուցվեն ծերերի խնամքին ուղղված երկարաժամկետ ծառայություններ՝ բացառապես անվճար հիմունքերով: |
| 2 | **Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը** | Հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ստանալը |
| 3 | **Բարեգործները** | Ալբեր Սեվինս (Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացի), «Ալբերտ Սեվինս» հիմնադրամ՝ գրանցված Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, անհատ բարերարներ |
| 4 | **Ծրագիրը կատարողը** | «Ալբերտ Սեվինս» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ 2601, ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, փողոց 6, տուն 25 Պետ. գրանցման համար՝ 222.160.947272, գրանցման ամսաթիվ 2017-02-24, ՀՎՀՀ 05544722 |
| 5 | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Ծրագիրն իրականացվում է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում: Բարեգործական ծրագրի բնագավառն է՝ սոցիալական: |
| 6 | **Ծրագրի բյուջեն** | 131,000,000 (հարյուր երեսունմեկ միլիոն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի |
| 7 | **Բարեգործություն ստացողը** | Շիրակի մարզում բնակվող և խնամքի կարիք ունեցող ծերեր |
| 8 | **Ծրագրի իրականացման տևողությունը** | Ծրագիրն իրականացվելու է 2017թ. մայիսի 1-ից մինչն 2018թ.հունիսի 1-ը: Ծերանոցի կառուցումից հետո նախատեսվում է իրականացնել երկարաժամկետ ծրագիր, որն ուղղված կլինի ծերերի խնամքին: |
| 9 | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | Ծրագիրն իրականացվում է 3 փուլով: |

| **Փուլ#** | **Միջոցառման նկարագրությունը** | **Իրականացման ժամկետը** | **Ֆինանսական միջոցների ծավալը (ՀՀ դրամ)** |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում ծերանոցի կառուցման համար անհրաժեշտ հողամասի ձեռքբերում | Մայիս-հուլիս 2017թ. | 5 000 000 |
| 2. | 370- 400 քմ ընդհանուր մակերեսով ծերանոցի կառուցման, ինչպես նաև ներքին հարդարման կապալային աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում, աշխատանքների կատարում | օգոստոս 2017-հունիս 2018 | 103 000 000 |
| 3. | Ծերանոցի կահույքի (ննջարաններ, խոհանոց, լոգարան, հյուրասենյակ) ՀՀ տարածքում ձեռքբերում կամ ներմուծում | հոկտեմբեր 2017-հունիս 2018 | 14 000 000 |
| Ընդհանուր ծախսեր | Խորհրդատվական և աուդիտորական ծառայություններ | մայիս 2017-հունիս 2018 | 4 000 000 |
| | Աշխատավարձ, գործուղում, նյութատեխնիկական ապահովում | մայիս 2017-հունիս 2018 | 4 000 000 |
| | Չնախատեսված այլ ծախսեր | մայիս 2017-հունիս 2018 | 1 000 000 |
| **Ընդամենը** | | | 131 000 000 |

| | | |
|---|---|---|
| 10 | **Ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | **1-ին փուլ.**<br>- Ծերանոցի կառուցման համար հողամասի ձեռքբերում՝ մայիս-հուլիս 2017թ., 5 000 000 ՀՀ դրամ<br><br>**2-րդ փուլ.**<br>- Ծերանոցի կառուցման, ինչպես նաև ներքին հարդարման կապալային աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում, աշխատանքների կատարում՝օգոստոս 2017-հունիս 2018, 103 000 000 ՀՀ դրամ<br><br>**3-րդ փուլ.**<br>- Ծերանոցի կահույքի (ննջարաններ, խոհանոց, լոգարան, հյուրասենյակ) ՀՀ տարածքում ձեռքբերում կամ ներմուծում՝ հունիս 2018-մայիս 2019, 14 000 000 ՀՀ դրամ<br><br>**Բոլոր փուլերի համար ընդհանուր.**<br>- Խորհրդատվական և աուդիտորական ծառայություններ՝ մայիս 2017-մայիս 2019, 4 000 000 ՀՀ դրամ<br>- Նյութատեխնիկական ապահովման համար ապրանքների և ծառայությունների ձեռքբերում՝ մայիս 2017-մայիս 2019, 1 000 000 ՀՀ դրամ |
| 11 | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր** | (see table below) |
| 12 | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Շիրակի մարզպետարան, Հայ Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմ, այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, «Շիրակ կենտրոն» ՀԿ և այլ հասարակական կազմակերպություններ: Համագործակցության շրջանակներում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը նախապես մշակված չափանիշները կներկայացնի նշված մարմիններին և կազմակերպություններին՝ խնդրելով |

| # | Ծախսի անվանում | Նախատեսված գումարը (ՀՀդրամ) |
|---|---|---|
| 1. | Աշխատավարձ, գործուղում | 3 000 000 |
| 2. | Նյութատեխնիկական ապահովում | 1 000 000 |
| 3. | Խորհրդատվական և աուդիտորական ծառայություններ | 4 000 000 |
| **Ընդամենը** | | **8 000 000** |

| | | |
|---|---|---|
| | | տրամադրել տվյալ համայնքում այդ չափանիշներին համապատասխանող թեկնածու ծերերի ցուցակ, որից հոգաբարձուների խորհուրդը վերջնական որոշմամբ ընտրություն կկատարի: Ծերերի ընտրության չափանիշները կհաստատվեն Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամը կրկին կդիմի համապատասխան մարմիններին եվ կազմակերպություններին յուրաքանչյուր դեպքում, երբ ծերանոցում հնարավորություն կստեղծվի ներգրավել խնամքի համար նոր թեկնածուի: |
| 13 | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | «Ալբերտ Սեվինս» հիմնադրամի (ԳԴՀ) ներկայացուցիչների պարբերական այցելություններ:<br>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ օրենքով սահմանված կարգով:<br>Հիմնադրամի տարեկան ֆինանսական աուդիտ և աուդիտի արդյունքների հրապարակվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 838 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16789-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N ՆՁ/22.2/11721-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 06/3-8/36407-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ազդանյութեր՝ 1 տեղ, 3 կգ ընդհանուր քաշով, 1,003.10 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 123.18 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 839 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16765-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 20-ի N ՆՉ/22.2/11624-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 19-ի N 06/3-8/36504-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարության «Գրիպի գիտահետազոտական ինստիտուտ» դաշնային պետական բյուջետային հաստատության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (A և B տիպի վիրուսներ, 18 սրվակ, 18 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 840 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16768-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N ՆՁ/22.2/11720-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 15–ի N 06/3-8/36437-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ազդանյութեր՝ 2 տեղ, 5.3 կգ ընդհանուր քաշով, 1,219 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 230.70 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 841 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 01.1/14-2/16662-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N 06/3-8/35954-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկը (տեղադրման նյութերով և պարագաներով՝ 119 տեղ, 13,560 կգ ընդհանուր քաշով, 60,358.38 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,500 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 842 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 12-ի N 01.1/14-2/16538-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N 06/3-8/35792-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկները (44 տեղ, 44,980 կգ ընդհանուր քաշով, 7,040 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,400 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Ի լրումն մեր 2017 թվականի հոկտեմբերի 5-ի
N 15/15.6/22086-17 ելիցի

10 հոկտեմբերի 2017թ.

No 15/15.6/22438-17

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N Մ-843-Ա որոշման 1-ին կետում «10,400 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «10,400 եվրո» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 843 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 01.1/14-2/16664-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N 06/3-8/35667-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկները (44 տեղ, 45,000 կգ ընդհանուր քաշով, 7,046.40 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,400 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 844 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 01.1/14-2/17065-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 06/3-8/37788-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված լուսատուները և կերամիկական երեսապատման սալերը (149 տեղ, 28,000 կգ ընդհանուր քաշով, 22,006.72 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,720 ԱՄՆ-ի դոլար, «Արևելյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքերի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 845 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17280-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 06/3-8/37994-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում՝

1) ներկեր, ներկի գլանակներ, պաստառներ, պաստառների տակդիրներ, փորագրության գործիքներ՝ 11.76 կգ ընդհանուր քաշով, 883.30 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 99.44 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

2) համակարգչի ներքին սարք (հիշողության սարք)՝ 3 հատ, 0.5 կգ ընդհանուր քաշով, 419.97 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 43.85 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.



3) հալոգեն լամպեր՝ 0.46 կգ ընդհանուր քաշով, 29.98 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 13.30 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

4) պրոյեկտորի լամպեր՝ 0.19 կգ ընդհանուր քաշով, 30.32 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 7.99 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

5) լազերային սկավառակներ՝ 0.82 կգ ընդհանուր քաշով, 64.10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 10.93 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

6) այցաքարտ կարդացող սարք և այցաքարտեր՝ 2.09 կգ ընդհանուր քաշով, 138.90 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10.45 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

7) ութ պորտանի RAID կարգավորիչ՝ 0.69 կգ ընդհանուր քաշով, 267 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

8) 4 հատ անիմացիոն գրատախտակ և համակարգչի մարտկոց՝ 4.86 կգ ընդհանուր քաշով, 849.69 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 98.30 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

9) պրոյեկտոր, համակարգչի մարտկոց, հիշողության սարքի ալյումինե տուփ, 2 հատ հեռուստացույցի շարժական տակդիր, 6 հատ պլանշետի տակդիր, 2 հատ բաժանարար՝ 57.36 կգ ընդհանուր քաշով, 752.26 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 236.84 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

10) պրոյեկտոր՝ 4 կգ ընդհանուր քաշով, 329 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 53.23 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

11) պրոյեկտորի լամպ՝ 4 հատ 1.73 կգ ընդհանուր քաշով, 474.06 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 56.14 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

12) ստեղնաշար, բարձրախոս, տեսաձայնային փոխակերպիչ, մալուխ, ջրցան համակարգի ղեկավարման սարք, 5 տուփ պիտակ, 35 հատ սնուցման սարք, 2 հատ ցանցային բաժանարար, 4 հատ ֆիլտր՝ 10.12 կգ ընդհանուր քաշով, 1,890.35 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 161.87 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

13) հիշողության սարք, մալուխ, գրքեր, 3 հատ ներքին հիշողության սարք, 5 հատ փոխակերպիչ՝ 12.62 կգ ընդհանուր քաշով, 1,269.98 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 173.84 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

2. Սահմանել, որ անհատ բարերար Բերջ Բերամյանի կողմից «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հասցեով ուղարկված օգտագործված համակարգիչը և թվային ժապավենի ձայնագրիչը (6.17 կգ ընդհանուր քաշով, 100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 14.35 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 846 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N Մ-696-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17201-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 06/3-8/37570-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի սեպտեմբերի 15-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-696-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «1,031,000 դրամ» բառերը փոխարինել «1,100,100 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 847 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՑՈԼԻՉՆԵՐՈՎ ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 01.1/14-2/17761-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 4-ի N 02/14/17534-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39103 -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,282,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համար արտացոլիչներով հայելիների գնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷՍԷՄ Սիսթեմս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02628906) 2017 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված N ԱՎ-ԱՃ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտացոլիչներով հայելիների ձեռքբերում՝ 2,282,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«28» սեպտեմբերի 2017թ.

**«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համար արտացոլիչներով հայելիների գնում»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Համապատասխանեցնել մեր կողմից կառուցած Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհը ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգի միջազգային ստանդարտներին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 2.282.000,00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Արցախի Հանրապետություն |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ սեպտեմբերի 27-ից մինչև 2017թ նոյեմբերի 20-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ սեպտեմբերի 27-ց մինչև 2017թ. նոյեմբերի 20-ը գնել Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի համար նախատեսված արտացոլիչներով հայելիների գնում՝ 2.282.000,00 դրամ արժողությամբ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ԷՍԷՄ Սիսթեմս» ՍՊԸ-ից թվով տաս DL 1190մմ արտացոլիչներով հայելիների և թվով քսան ամրակների գնում՝ 2.282.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 848 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17200-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 06/3-8/37504-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Զիգզագ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500164) 2017 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի ձեռքբերում՝ 296,083.33 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՌԵԴ-ՓՈԻՆԹ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2017 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 184,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Դը ՀոՌեԿա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02643751) 2017 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հարիչի ձեռքբերում՝ 263,597 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) ԱՄՆ-ի քաղաքացի Մեգան Շիի հետ (անձնագիր՝ 486951585) 2017 թվականի օգոստոսի 29-ին կնքված՝ N 01-29.08.17 պայմանագրում նշված գործարքը, որով



նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 480,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) ԱՄՆ-ի քաղաքացի Քոդի Լայնի հետ (անձնագիր՝ 557290131) 2017 թվականի օգոստոսի 21-ին կնքված՝ N 01-21.08.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 550,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի Վամսի Քրիշնա Վեմուրիի հետ (անձնագիր՝ J2475862) 2017 թվականի սեպտեմբերի 8-ին կնքված՝ N 01-08.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Արամ Միրզոյանցի հետ (անձնագիր՝ 71 6049414) 2017 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N 01-23.08.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 870,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 849 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17287-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 06/3-8/37995-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N ՆՁ/22.2/12071-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Իտալիայի Հանրապետության առողջապահության նախարարության Իտալիայի արյան ազգային կենտրոնի կողմից որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (3 տեղ, 658.2 կգ ընդհանուր քաշով, 15.76 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 850 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 01.1/14-2/17344-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/38369-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N ՆՁ/22.2/12044-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Կաթոլիկ բժշկական առաքելության խորհուրդ (CMMB)» ոչ առևտրային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (34 տեղ, 5,577 կգ ընդհանուր քաշով, 445,275.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,380 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՎ) ներմուծման և անհատույց բաշխման (բեռի և բաշխման ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումը ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՀ 089

### «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (CMMB) | Դեղեր | Ալթունյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն | SC 089-01 | 6 | 1,452.00 | 322,890.55 |
| 2 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (CMMB) | Բժշկական պարագաներ | Ալթունյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն | SC 089-02 | 24 | 9,679.00 | 116,249.14 |
| 3 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (CMMB) | Բժշկական պարագաներ | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | SC NKR 089-03 | 3 | 1,127.00 | 4,575.36 |
| 4 | Հայաստան - Արցախ հիմնադրամ (CMMB) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն· | SC NKR 089-04 | 1 | 11.00 | 1,560.00 |
| | **Ընդամենը** | | | | 34 | 12,269.00 | 445,275.05 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 851 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N Մ-605-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՀՀ առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 01.1/14-2/17527-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N ՆՁ/22.2/12076-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/38311-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 597 գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-605-Ա որոշմանը կից բեռի և բաշխման ցանկը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Մ 12/5.1

**ՀԱՀ 086**

## «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ալթունյան Լ. – ՀՀ առողջապահության նախարարություն | SC 086-01 | 193 | 2,359 | 1,680,994.13 |
| 2. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR SC 086-02 | 39 | 322 | 181,615.05 |
| 3. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ղազարյան Ս.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | SC 086-03 | 29 | 155 | 83,841.41 |
| 4. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | SC 086-04 | 6 | 95 | 43,721.96 |
| 5. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Աղաջանովա Ե. – <<Մուրացան>> բժշկական կենտրոն | SC 086-05 | 1 | 10 | 1,247.04 |
| 6. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Աբրահամյան Ռ. - Վերարտադրողական Առողջության, Պերինատալոգիայի, Մանկաբարձության և Գինեկոլոգիայի Հանրապետական Ինստիտուտ | SC 086-06 | 4 | 37 | 19,090.75 |
| 7. | Հայաստան – Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Ալթունյան Լ. – ՀՀ առողջապահության նախարարություն | SC 086-07 | 832 | 13,893 | 119,317.08 |
| 8. | Հայաստան – Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR SC 086-08 | 21 | 118 | 17,814.70 |
| 9. | Հայաստան – Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Աբրահամյան Ռ. - Վերարտադրողական Առողջության, Պերինատալոգիայի, Մանկաբարձության և Գինեկոլոգիայի Հանրապետական Ինստիտուտ | SC 086-09 | 196 | 2,253 | 31,622.33 |
| 10. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Պարագաներ (հագուստ, հիգիենայի միջոցներ) | Սարգսյան Բ. – Հայ Օգնության Ֆոնդ | SC 086-10 | 122 | 1,944 | 6,152.35 |
| 11. | Հայաստան - Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Պարագաներ (հիգիենայի միջոցներ, սպասք) | Գալստյան Տ. – <<Մեծն Ներսես>> բարեգործական կազմակերպություն | SC 086-11 | 158 | 3,472 | 10,124.88 |
| | | | **Ընդամենը** | | **1601** | **24,658** | **2,195,541.68** |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 852 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 01.1/14-2/17362-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38727-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01255848) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա, 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա, 2017 թվականի մարտի 31-ի N Մ-246-Ա և հունիսի 23-ի N Մ-562-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00066784) 2017 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված՝ N YL-H 032/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ   Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 853 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17279-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 06/3-8/38005-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա, 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա, 2017 թվականի մարտի 31-ի N Մ-246-Ա և հունիսի 23-ի N Մ-562-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00891777) 2017 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ N SP-09/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ համայնքի Փյունիկ գյուղի 2-րդ թաղամասի N 12 ճամբարի ներքին ճանապարհային ցանցի հիմնանորոգման աշխատանքների երկրորդ փուլի իրականացում՝ 19,561,555 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Կարին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529731) 2017 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված՝ N 20/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական սարքավորումների ծռքբերում ու տեղադրում՝ 647,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 854 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-739-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 01.1/14-2/17452-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38725-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի սեպտեմբերի 22-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» N Մ-739-Ա որոշման 1-ին կետում «95,300 կգ ընդհանուր քաշով, 48,105.23 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,102,010 դրամ» բառերը փոխարինել «265,839 կգ ընդհանուր քաշով, 145,260.68 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,289,710 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 855 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N Մ-1273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 01.1/14-2/17459-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/38322-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ամրանները (46,649 կգ ընդհանուր քաշով, 27,665.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,344,889 դրամ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» կենտրոնի» ստեղծում ծրագրի մասին» N Մ-1273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 856 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 01.1/14-2/17450-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/38371-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քլինլյն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01847941) 2017 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մաքրման աշխատանքների իրականացում՝ 165,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 857 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-715-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 01.1/14-2/17370-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38728-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի զբոսայգու վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-715-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2017 թվականի սեպտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նստարանների և աղբարկղերի ձեռքբերում՝ 1,970,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 858 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 01.1/14-2/17359-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 06/3-8/38312-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1226-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կար-Սլեյթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06952916) 2017 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 600 ք/մ գունավոր թիթեղի ձեռքբերում՝ 1,300,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 859 -Ա
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-715-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 01.1/14-2/17367-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 06/3-8/37572-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիր քաղաքի զբոսայգու վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-715-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՎԵԿՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2017 թվականի օգոստոսի 24-ին կնքված՝ N ՎՏՀ/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե երեսապատման սալիկների և կողային տաշվածքով կափարիչների ձեռքբերում՝ 2,745,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՎԵԿՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2017 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N ՎՏՀ/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե երեսապատման սալիկների ձեռքբերում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N 44-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 100 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 860 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1211-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 01.1/14-2/17457-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38777-17 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N ԱԳ/ԱնՄ-2-1/10012-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (ոլոռ՝ 11,000 կգ ընդհանուր քաշով, 352,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, վարսակաձավար՝ 11,000 կգ ընդհանուր քաշով, 616,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, բրինձ՝ 11,000 կգ ընդհանուր քաշով, 561,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը և հնդկաձավար՝ 11,000 կգ ընդհանուր քաշով, 495,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1211-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկերը կցվում են):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

### *Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս : N 3 8.9.2017

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ոլոռ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 360 | 11.511 |
| | | | Այգուտ | 138 | 360 | 11.511 |
| | | | Մարտունի | 68 | 177 | 5.672 |
| | | | Դպրաբակ | 59 | 154 | 4.921 |
| | | | Վահան | 172 | 448 | 14.347 |
| | | | Կալավան | 22 | 57 | 1.835 |
| | | | Բարեպատ | 5 | 13 | 417 |
| | | | Ձորավանք | 22 | 57 | 1.835 |
| | | | Լճաշեն | 46 | 120 | 3.837 |
| | | | Աղբերք | 43 | 112 | 3.587 |
| | | | Ճամբարակ | 152 | 396 | 12.679 |
| | | | Անտառամեջ | 12 | 31 | 1.001 |
| | | | Գավառ | 18 | 47 | 1.501 |
| | | | Թթուջուր | 128 | 334 | 10.677 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 25 | 65 | 2.085 |
| | | | Գեղակերտ | 57 | 149 | 4.754 |
| | | | Արտաշար | 50 | 130 | 4.171 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 26 | 834 |
| | | | Արտաշատ | 17 | 44 | 1.418 |
| | | | Գետազատ | 14 | 36 | 1.168 |
| | | | Վարդաշեն | 1 | 3 | 83 |
| | | | Մրգանուշ | 10 | 26 | 834 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 47 | 1.501 |
| | | | Սևաբերդ | 20 | 52 | 1.668 |
| | | | Աբովյան | 50 | 130 | 4.171 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 78 | 2.502 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 109 | 3.503 |
| | | | Ակունք | 33 | 86 | 2.753 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 52 | 1.668 |
| | | Երևան | | 2800 | 7301 | 233.554 |
| | Ընդամենը | | | 4220 | 11000 | 352.000 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝* *Բ. Զամբազյան*

## *Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս : N 3 8.9.2017

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Վարսակաձավար | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 360 | 20.144 |
| | | | Այգուտ | 138 | 360 | 20.144 |
| | | | Մարտունի | 68 | 177 | 9.926 |
| | | | Դպրաբակ | 59 | 154 | 8.612 |
| | | | Վահան | 172 | 448 | 25.107 |
| | | | Կալավան | 22 | 57 | 3.211 |
| | | | Բարեպատ | 5 | 13 | 730 |
| | | | Ձորավանք | 22 | 57 | 3.211 |
| | | | Լճաշեն | 46 | 120 | 6.715 |
| | | | Աղբերք | 43 | 112 | 6.277 |
| | | | Ճամբարակ | 152 | 396 | 22.188 |
| | | | Անտառամեջ | 12 | 31 | 1.752 |
| | | | Գավառ | 18 | 47 | 2.627 |
| | | | Թթուջուր | 128 | 334 | 18.684 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 25 | 65 | 3.649 |
| | | | Գեղակերտ | 57 | 149 | 8.320 |
| | | | Արտաշար | 50 | 130 | 7.299 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 26 | 1.460 |
| | | | Արտաշատ | 17 | 44 | 2.482 |
| | | | Գետազատ | 14 | 36 | 2.044 |
| | | | Վարդաշեն | 1 | 3 | 146 |
| | | | Մրգանուշ | 10 | 26 | 1.460 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 47 | 2.627 |
| | | | Սևաբերդ | 20 | 52 | 2.919 |
| | | | Արզական | 50 | 130 | 7.299 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 78 | 4.379 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 109 | 6.131 |
| | | | Ակունք | 33 | 86 | 4.817 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 52 | 2.919 |
| | | Երևան | | 2800 | 7301 | 408.719 |
| | Ընդամենը | | | 4220 | 11000 | 616.000 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* *Բ. Զամբազյան*

## *Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս : N 3 8.9.2017

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 3 | Բրինձ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 360 | 18.345 |
| | | | Այգուտ | 138 | 360 | 18.345 |
| | | | Մարտունի | 68 | 177 | 9.040 |
| | | | Դպրաբակ | 59 | 154 | 7.843 |
| | | | Վահան | 172 | 448 | 22.865 |
| | | | Կալավան | 22 | 57 | 2.925 |
| | | | Բարեպատ | 5 | 13 | 665 |
| | | | Ձորավանք | 22 | 57 | 2.925 |
| | | | Լճաշեն | 46 | 120 | 6.115 |
| | | | Աղբերք | 43 | 112 | 5.716 |
| | | | Ճամբարակ | 152 | 396 | 20.207 |
| | | | Անտառամեջ | 12 | 31 | 1.595 |
| | | | Գավառ | 18 | 47 | 2.393 |
| | | | Թթուջուր | 128 | 334 | 17.016 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 25 | 65 | 3.323 |
| | | | Գեղակերտ | 57 | 149 | 7.577 |
| | | | Արտաշար | 50 | 130 | 6.647 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 26 | 1.329 |
| | | | Արտաշատ | 17 | 44 | 2.260 |
| | | | Գետազատ | 14 | 36 | 1.861 |
| | | | Վարդաշեն | 1 | 3 | 133 |
| | | | Մրգանուշ | 10 | 26 | 1.329 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 47 | 2.393 |
| | | | Սևաբերդ | 20 | 52 | 2.659 |
| | | | Արզական | 50 | 130 | 6.647 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 78 | 3.988 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 109 | 5.583 |
| | | | Ակունք | 33 | 86 | 4.387 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 52 | 2.659 |
| | | Երևան | | 2800 | 7301 | 372.226 |
| | Ընդամենը | | | 4220 | 11000 | 561.000 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* *Բ. Զամբազյան*

*Բեռի բաշխման ցանկ*

հնվոյս : N 3 8.9.2017

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | Հնդկաձավար | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 360 | 16.187 |
| | | | Այգուտ | 138 | 360 | 16.187 |
| | | | Մարտունի | 68 | 177 | 7.976 |
| | | | Դպրաբակ | 59 | 154 | 6.921 |
| | | | Վահան | 172 | 448 | 20.175 |
| | | | Կալավան | 22 | 57 | 2.581 |
| | | | Բարեպատ | 5 | 13 | 586 |
| | | | Ձորավանք | 22 | 57 | 2.581 |
| | | | Ldաշեն | 46 | 120 | 5.396 |
| | | | Աղբերք | 43 | 112 | 5.044 |
| | | | Ճամբարակ | 152 | 396 | 17.829 |
| | | | Անտառամեջ | 12 | 31 | 1.408 |
| | | | Գավառ | 18 | 47 | 2.111 |
| | | | Թթուջուր | 128 | 334 | 15.014 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 25 | 65 | 2.932 |
| | | | Գեղակերտ | 57 | 149 | 6.686 |
| | | | Արտաշար | 50 | 130 | 5.865 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 10 | 26 | 1.173 |
| | | | Արտաշատ | 17 | 44 | 1.994 |
| | | | Գետազատ | 14 | 36 | 1.642 |
| | | | Վարդաշեն | 1 | 3 | 117 |
| | | | Մրգանուշ | 10 | 26 | 1.173 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 18 | 47 | 2.111 |
| | | | Սևաբերդ | 20 | 52 | 2.346 |
| | | | Արզական | 50 | 130 | 5.865 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 78 | 3.519 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 109 | 4.927 |
| | | | Ակունք | 33 | 86 | 3.871 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 52 | 2.346 |
| | | Երևան | | 2800 | 7301 | 328.434 |
| | Ընդամենը | | | 4220 | 11000 | 495.000 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝* *Բ. Զամբազյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 861 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 01.1/14-2/17285-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի N 06/3-8/37993-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա, օգոստոսի 4-ի N Մ-691-Ա, սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում՝

1) թանաքային գրիչներ, մարկերներ և թանաքներ՝ 0.41 կգ ընդհանուր քաշով, 102.84 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 12.56 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

2) 8 տուփ անիմացիոն թուղթ՝ 32.48 կգ ընդհանուր քաշով, 319.92 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 267.23 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ.

3) պոստերներ կախելու տակդիրներ՝ 15 կգ ընդհանուր քաշով, 321 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 105 եվրո, իսկ այլ ծախսերը՝ 60.99 եվրո, «Արևմտյան» ՄՎ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 862 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-760-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
**(«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 25–ի N 01.1/14-2/17278-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 27-ի N 03/07-1/12970-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 26–ի N ՆՁ/22.2/11936-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 06/3-8/37648-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «ԵՊԲՀ–ում ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-760-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «245,769,460 դրամ» բառերը փոխարինել «249,073,200 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի կողմից
«19» սեպտեմբերի, 2017թ.
Ա. Մուրադյան

## «ԵՊԲՀ-ՈՒՄ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է խթանել ԵՊԲՀ-ի կրթական բարեփոխումները, նպաստել կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողների գործնական հմտությունների ուսուցանման նպատակով ԵՊԲՀ-ում ստեղծվելու է ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոն: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկերի, տուրքերի, պարտադիր այլ վճարների մասով արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Նորարարությունների մրցակցային հիմնադրամ Ս. Վրացյան 73, Երևան 0070, Հեռ՝ +374 (10) 57 56 90, Էլ. փոստ cfep@arminco.com |



12/4.17

| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ (ԵՊԲՀ), ՀՀ, ք. Երևան, 0025, Կորյունի 2, ՀՎՀՀ 01503448 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ԵՊԲՀ, ք. Երևան, Կորյուն 2, բնագավառը՝ կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 249 073 200 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԵՊԲՀ-ի ուսանողներ, կլինիկական օրդինատորներ եւ դասախոսներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016թ. սեպտեմբերի 1 - 2018թ. հունիսի 30 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ. սեպտեմբեր – 2018թ. հունվար: Ստոմատոլոգիական վարժասարքերի և ծախսանյութերի 1-ն խմբաքանակի ձեռք բերում և ներմուծում, տեղադրում և ուսուցում:<br>**Ընդհանուր արժեքն է՝ 204 325 000 ՀՀ դրամ:**<br><br>2018թ. փետրվար – 2018թ. հունիս: Ստոմատոլոգիական վարժասարքերի հավաքածի՝ 2-րդ խմբաքանակի ձեռք բերում և ներմուծում, տեղադրում և ուսուցում:<br>**Ընդհանուր արժեքն է՝ 44 748 200 ՀՀ դրամ:**<br><br>Ծրագրի իրականացման արդյունքում հիմնվելու է ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոն, որտեղ ԵՊԲՀ ուսանողները բարձր տեխնոլոգիական սարքավորումների, սիմուլյատորների և վարժասարքերի միջոցով հնարավորություն կունենան ձեռք բերել պահանջվող գործնական հմտություններն ու մասնագիտական կոմպետենցիաները: Ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի շնորհիվ ԵՊԲՀ ստոմատոլոգիական |



| | | |
|---|---|---|
| | | ֆակուլտետի կրթական համակարգում ներդրվելու է մասնագիտական կրթության նոր մեթոդ՝ սիմուլյացիոն ուսուցում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2016թ. սեպտեմբեր – 2018թ. հունվար: Ստոմատոլոգիական վարժասարքերի և ծախսանյութերի ձեռքբերում: Այն իր մեջ ներառում է. 1) Համակարգչայնացված մանեկեն-վարժասարքի 1 հավաքածու՝ հիմնական սարքավորումների հավաքածուն, այդ թվում՝ համակարգիչ և ծրագրային փաթեթ, որով դասավանդվում և ստուգվում են ստոմատոլոգիական բուժ-կանխարգելիչ գործողություններ, դասավանդվում են ձեռքի ունակություններ, կանխարգելիչ և թերապևտիկ ստոմատոլոգիայի, ֆիքսված, շարժական օրթոպեդիկ ստոմատոլոգիայի, մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի, ռադիոլոգիայի, անզգայացման, էնդոդոնտիայի, վիրաբուժության, բերանի խոռոչի հիգիենայի, պարօդոնտոլոգիայի, պաթոլոգիայի, անատոմիայի և ատամնաբուժական տեխնիկայի բնագավառներում՝ նախակլինիկական և հետդիպլոմային ուսանողների համար: 2) Ֆիպոդոնտ տեսակի պարզ ստոմատոլոգիական վարժասարք՝ 24 հավաքածու: 3) Պլաստմասե ատամներ՝ 200 հավաքածու: 4) Պլաստմասե ատամներ կակղանի խոռոչով՝ 450 հատ: 5) Կաղապարի պլաստիկ մոդել՝ 15 հատ: 6) Ակրիլե ատամների էնդոդոնտիկ մոդելներ՝100 հատ: 7) Պերիօդոնտալ ծնոտային մոդելներ՝ 10 հատ: 8) Անշարժ ստոմատոլոգիական վարժասարք՝ 12 հավաքածու, վարժասարքի շնորհիվ ուսուցանվում են ձեռքի ունակություններ, նախադիպլոմային և հետդիպլոմային կրթական ծրագրերի ուսանողների համար, կանխարգելիչ և թերապևտիկ ստոմատոլոգիայի, ինչպես նաև ֆիքսված, շարժական և ամբողջական օրթոպեդիկ ստոմատոլոգիայի, մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի, ռադիոլոգիայի |

| | | |
|---|---|---|
| | | անզգայացման, էնդոդոնտիայի, վիրաբուժության, բերանի խոռոչի հիգիենայի, պարօդոնտոլոգիայի (պերիօդոնտոլոգիա), պաթոլոգիայի, անատոմիայի և ատամնաբուժական տեխնիկայի բնագավառներում: 9) Ստոմատոլոգիական տիպարների /մոդելների/ հավաքածու` 10 հավաքածու: 10) Ստոմատոլոգիական օդային ճնշակ` 15 հատ: 11) Ստոմատոլոգիական շարժական համասարք (բոռ մեքենա)` 24 հատ:<br>**Ընդհանուր արժեքն է` 204 325 000 ՀՀ դրամ:**<br>**Այդ թվում.**<br>**1. հավաքածուների արժեքը` 193 950 000 ՀՀ դրամ,**<br>**2. տեղադրում և ուսուցում` 10 375 000 ՀՀ դրամ:**<br><br>**2018թ. փետրվար – 2018թ. հունիս:** Անշարժ ստոմատոլոգիական վարժասարք` 5 հավաքածու, վարժասարքի շնորհիվ ուսուցանվում են ձեռքի ունակություններ, նախադիպլոմային և հետդիպլոմային կրթական ծրագրերի ուսանողների համար, կանխարգելիչ և թերապևտիկ ստոմատոլոգիայի, ինչպես նա և ֆիքսված, շարժական և ամբողջական օրթոպեդիկ ստոմատոլոգիայի, մանկական ստոմատոլոգիայի և օրթոդոնտիայի, ռադիոլոգիայի, անզգայացման, էնդոդոնտիայի, վիրաբուժության, բերանի խոռոչի հիգիենայի, պարօդոնտոլոգիայի (պերիօդոնտոլոգիա), պաթոլոգիայի, անատոմիայի և ատամնաբուժական տեխնիկայի բնագավառներում:<br>**Ընդհանուր արժեքն է` 44 748 200 ՀՀ դրամ:**<br>**Այդ թվում.** |



| | | |
|---|---|---|
| | | 1. հավաքածուների արժեքը` 42 354 172 ՀՀ դրամ,<br>2. տեղադրում և ուսուցում` 2 394 028 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն` ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | 1. Ընթացիկ այցեր և ծրագրի իրականացման ընթացքի գնահատում Նորարությունների մրցակցային հիմնադրամի փորձագետների, ՀՀ ԿԳՆ մասնագետների կողմից:<br>2. Հաշվետվությունների ներկայացում ՀՀ ԵՊԲՀ միջազգային համագործակցության և կրթական ծրագրերի բաժիններին ըստ ընդունված կարգի:<br>3. Ֆինանսական և ծրագրային հաշվետվության ներկայացում ՀՀ Կթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ին:<br>4. Հաշվետվություններ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

Ծրագրի համակարգող`

Ա.Վ. Բայ[illegible]

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 863 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/14-2/17525-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 06/3-8/38721-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված խոտածածկի մշակման տեխնիկան և պարագաները (1 տեղ, 2,061.16 կգ ընդհանուր քաշով, 30,430.26 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 864 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 01.1/14-2/17531-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39155-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկները (42 տեղ, 42,980 կգ ընդհանուր քաշով, 6,720 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9,700 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 865 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 01.1/14-2/17534-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39159-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (5 տեղ, 125,000 կգ ընդհանուր քաշով, 6,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 866 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-714-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/14-2/17567-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39157-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկները (44 տեղ, 44,920 կգ ընդհանուր քաշով, 7,043.20 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,400 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Սիսիանի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-714-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 867 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-714-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 07/14-2/17576-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39162-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկները (9 տեղ, 9,190 կգ ընդհանուր քաշով, 1,440 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,600 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Սիսիանի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-714-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 868 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 01.1/14-2/17530-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39160-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկները (9 տեղ, 9,190 կգ ընդհանուր քաշով, 1,440 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,600 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-732-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 869 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 01.1/14-2/17526-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39161-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի ռետինե գնդիկները (22 տեղ, 22,460 կգ ընդհանուր քաշով, 3,520 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,200 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-732-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 870 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 28-ի N 07/14-2/17529-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39156-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված լողավազանի հովանոցները (3 տեղ, 375 կգ ընդհանուր քաշով, 9,626.48 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 459,000 դրամ, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**2 հոկտեմբերի 2017 թվականի N Մ - 871 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1438-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 29-ի N 01.1/14-2/17577-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 2-ի N 06/3-8/39071-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Շիրակ» բժշկական ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-1438-Ա որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2013 թվականի հուլիսի 2-ին կնքված N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի փետրվարի 28-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 81,662 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի մարտի 1-ին կնքված N 402719529 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 233,320 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 872 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 70011 ԶՈՐԱՄԱՍԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի սեպտեմբերի 28-ի համաձայնեցման թերթը, **ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնային Հանրապետության քաղաքացի անհատ բարերար Սոնա Խաչատրյանի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 70011 զորամասի (Զանգեզուրի կայազորային հոսպիտալ) հասցեով ստացված բեռի (15 տեղ, 243 կգ ընդհանուր քաշով, 7,090 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Հարավային» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 70011 զորամասին (Զանգեզուրի կայազորային հոսպիտալ)՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### Բ Ե Ռ Ի  Ց Ա Ն Կ

Համաձայն № 05100033/130917/00035226 տարանցման հայտարարագրի և №20052017 առ 18.08.2017թ. հաշիվ-ապրանքագրի ՀՀ ՊՆ 70011 զորամասի անունով ՀՀ տարածք ներմուծված բեռի նախնական զննման արդյունքում պարզվեց հետևյալը՝

| Ապրանքի նկարագիրը | Հատ | Տեղերի քանակ | Բրուտտո քաշ, կգ | Նետտո քաշ, կգ | Արժեք EUR | Ծագման երկիր |
|---|---|---|---|---|---|---|
| Օրթոպետիկ հենակներ՝ օգտ. | 76 | 1 | 42 | 41.4 | 2280 | Գերմանիա |
| Մետաղական և փայտյա ձեռնափայտեր՝ օգտ. | 8 | - | 3 | 3 | 120 | Գերմանիա |
| Օրթոպետիկ բեկակալներ ոտքի կոտրվածքի համար՝ | 6 | 1 | 6 | 5.8 | 660 | Գերմանիա |
| Աթոռ-զուգարանակոնք՝ մետաղյա հիմքով, պլ. նստատեղով՝ օգտ. | 1 | 1 | 12 | 12 | 440 | Գերմանիա |
| Օրթոպետիկ բեկակալներ թևի կոտրվածքի համար՝ | 10 | 1 | 7 | 6.8 | 800 | Գերմանիա |
| Մարմնի տարբեր հատվածների օրթոպետիկ փափուկ բեկակալներ՝ օգտ. | 13 | - | 2 | 2 | 130 | Գերմանիա |
| Հաշմանդամի սայլակ՝ օգտ. | 1 | 1 | 38 | 38 | 550 | Գերմանիա |
| Հաշմանդամի սայլակ՝ օգտ. | 1 | 1 | 40 | 40 | 450 | Գերմանիա |
| Հաշմանդամի սայլակ՝ օգտ. | 1 | 1 | 21 | 21 | 450 | Գերմանիա |
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 7 | 7 | 360 | Գերմանիա |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 10 | 10 | 150 | Գերմանիա |
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 8 | 8 | 150 | Գերմանիա |
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 9 | 9 | 150 | Գերմանիա |
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 11 | 11 | 100 | Գերմանիա |
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 11 | 11 | 100 | Գերմանիա |
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 9 | 9 | 100 | Գերմանիա |
| Հաշմանդամի հենակ-քայլակ՝ օգտ. | 1 | 1 | 7 | 7 | 100 | Գերմանիա |
| Ընդամենը | - | 15 | 243 | 242 | 7090 | |

ՀՀ ՊՆ 70011 ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

15.09.2017թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 873 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հոկտեմբերի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի Ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված և իր հասցեով Հայաստանի լեռնադահուկային սպորտի զարգացման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (պարաններ, 2 տեղ, 22,163 կգ ընդհանուր քաշով, 91,415 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի Ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 874 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հոկտեմբերի 5-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված կենցաղային էլեկտրատեխնիկան ու սառնարանները (1,087 տեղ, 10,475.21 կգ ընդհանուր քաշով, 114,272 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետ–տության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

Ձեռք բեռված կենցաղային էլեկտրատեխնիկան և սառնարանները անհատույց հանձնվելու են Երևանի քաղաքապետարանին:

2. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ Երևանի քաղաքապետարանի կողմից նշված բեռների բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարությանը ու ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել բեռի բաշխման ցանկը:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**10 հոկտեմբերի 2017 թվականի N Մ- 875 -Ա**
**(որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 29-ին)**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 17.03.2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2017 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի օգոստոսի 18-ի N 05/08.2/51693-17 ու հոկտեմբերի 9-ի N 05/08.2/52030-17 գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 15-ի N 01.1/14-2/16794-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 04/14/14889-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի օգոստոսի 25-ի N 01/18.2/5443-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 23-ի N 06/3-8/37663-17 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի օգոստոսի 24-ի N 01/21/3500-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 100,907,500 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին և Դիլիջանի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության բնապահպանության
նախարարության աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
«13» «սեպտեմբեր» 2017թ.

# ԾՐԱԳԻՐ

## Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016թվականի կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականի կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում 2017 թվականի ընթացքում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում, <<էկոզբոսաշրջային>> ստեղծման աշխատանքներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կովկասի Բնության Հիմնադրամ, Թուլպենհոֆշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մարզ, ք.Դիլիջան<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Դիլիջան» ազգային պարկ»ՊՈԱԿ-ի համար «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ 100 907 500 ՀՀ դրամ): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 13.09.2017թ. - 31.12.2017թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագիր՝ 13.09.2017թ. - 31.12.2017թ. - **100 907 500 ՀՀ դրամ**, այդ թվում՝<br><br>1. **Շենքերի և շինությունների կառուցում** /3-4-րդ եռամսյակ/ – **7 506,8 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում. |

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| «Էկոզբոսաշրջային-ի կառուցում. Դիլիջան-Պարզ լիճ հատվածում՝ էկոերթուղու մուտքամասում ստեղծել <<էկոզբոսաշրջային>> մի շարք հետաքրքիր ատրակցիոններով /կամարաձև մուտք դեպի տարածք, պասիվ հանգստի գոտի/ | դրամ | 1 | 5506,8 |
| Պահակատների կառուցում | հատ | 3 | 2000,0 |

2. **Գրասենյակային նյութերի և արտադրական հատուկ հագուստի ձեռքբերում** /3-4-րդ եռամսյակ/ – **3 602,2 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Արտահագուստ պահպանության բաժնի աշխատակիցների համար | հավաքածու | 40 | 2800,0 |
| Կիսաճտքավոր կոշիկներ | հատ | 20 | 70,0 |
| Գրասենյակային ապրանքներ | դրամ | 1 | 732,2 |

3. **Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում** /3-4-րդ եռամսյակ/ – **1 307,9 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ցերտավարագույրներ | $մ^2$ | 60 | 300,0 |
| Առաջին օգնության արկղեր | հատ | 5 | 50,0 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | դրամ | 1 | 957,9 |

**4. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում** /4-րդ եռամսյակ/ **-5 278,5 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ամենագնաց մեքենա | հատ | 1 | 5278,5 |

**5. Վարչական սարքավորումների ձեռքբերում** /3-4-րդ եռամսյակ/ **-5 400,0 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Տպիչ/պատճենահանման մեքենա/սկաներ (բազմաֆունկցիոնալ սարք) | հատ | 1 | 200,0 |
| Անխափան սնուցման սարք | հատ | 5 | 250,0 |
| Ֆոտոթակարդ GSM համակարգով | հատ | 10 | 3 000,0 |
| Ձեռքի նավիգացիոն սարք | հատ | 5 | 250,0 |
| Հեռադիտակ | հատ | 5 | 1 100,0 |
| Լրագրասեղան | հատ | 1 | 100,0 |
| Չհրկիզվող պահարան | հատ | 2 | 500,0 |

**6. Այլ սարքավորումների ձեռքբերում** /3-4-րդ եռամսյակ/ **-27 453,0 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Անցակետային հսկողության սարքեր | հատ | 18 | 1 800,0 |
| Կառավարման և տեսահսկման համակարգ | դրամ | 1 | 12 653,0 |
| Փայտի բրիկետավորման սարքավորումներ | հատ | 1 | 13 000,0 |

**7. Նախագծահետազոտական ծախսեր** /3-4-րդ եռամսյակ/ **- 3 300,0 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավ լը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | դրամ | 1 | 300,0 |
| Քարտեզագրման և սահմանազատման աշխատանքներ | դրամ | 1 | 3 000,0 |

**8. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում**
/3-4-րդ եռամսյակ/ **- 500,0 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Հանգստի տարածքների վերանորոգման աշխատանքներ | դրամ | 1 | 500,0 |

**9. Ծառայությունների ձեռքբերում** /1-4-րդ եռամսյակ/ **- 11 909,1 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում.

| Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները | Չափի միավորը | Ամբողջ քանակը (ծավալը) | Ընդհանուր գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիա | դրամ | 1 | 1 000,0 |
| Գազամատակարարում | դրամ | 1 | 1 590,0 |
| Խմելու ջրի բաշխում | դրամ | 1 | 300,0 |
| Աղբի հավաքման ծառայություններ | դրամ | 1 | 150,0 |
| Միջազգային և միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ | դրամ | 1 | 500,0 |
| Համացանց | դրամ | 1 | 150,0 |
| Փոստային ծառայություններ | դրամ | 1 | 30,0 |
| Տվյալների բազայի համակարգչային ծրագրային փաթեթներ | դրամ | 1 | 200,0 |
| Համացանցային էջերի հոսթինգի ծառայություններ | դրամ | 1 | 28,8 |

| | | | |
|---|---|---|---|
| Դոմենային անվանումներ | դրամ | 1 | 12,0 |
| Հակահրդեհային պաշտպանության ծառայություններ | դրամ | 1 | 112,3 |
| Նավիգացիոն ծառայություններ | դրամ | 1 | 900,0 |
| Շենքերի չափագրման ծառայություններ | դրամ | 1 | 500,0 |
| Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 3 000,0 |
| Համակարգչային սարքավորումների պահպանման և վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 500,0 |
| Ջեռուցման համակարգերի վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 2 936,0 |

**10. Պարտադիր վճարներ՝ տրանսպորտային միջոցների գրանցման հետ կապված տուրքեր /4-րդ եռամսյակ/ – 150,0 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում.
**11. «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն** (խրախուսում) /յուրաքանչյուր եռամսյակ/ **- 34 500,0 հազ. ՀՀ դրամ**

| | | |
|---|---|---|
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. Շենքերի և շինությունների կառուցում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **7 506,8 հազ.դրամ**<br>2. Գրասենյակային նյութերի և արտադրական հատուկ հագուստի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **3 602,2հազ. ՀՀ դրամ**<br>3. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **1 307,9 հազ. ՀՀ դրամ**<br>4. Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **5 278,5 հազ.դրամ**<br>5. Վարչական սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **5 400,0 հազ. ՀՀ դրամ**<br>6. Այլ սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **27453,0 հազ. ՀՀ դրամ**<br>7. Նախագծահետազոտական ծախսեր (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **3 300,0 հազ.դրամ**<br>8. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **500,0 հազ. ՀՀ դրամ:**<br>9. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - **11 909,1 հազ. ՀՀ դրամ:** |
